ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 21

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 06-ը մարտի 2020 թվականի թիվ 3 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 06 մարտի 2020 թվականի թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի Ազարակաձոր բնակավայրում ԵԽ-ի դրամաշնորհային ծրագրով իրականացվող՝ համայնքային տարածքը որպես ռեսուրս կենտրոնի հիմնանորոգման և կահավորման ծրագրի իրականցման համար ներդրումային չափ սահմանելու մասին,

3. Արենի համայնքի ավագանու 21.01.2020թվականի թիվ 4 որոշումը անվավեր ճանաչելու մասին,

4. Խոշորացված Արենի համայնքի նախկին համայնքապետարաններին՝ նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարների հետ վերադարձը զիջելու մասին,

5. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում գործունեություն ծավալող <<Վայրի դեղաբույսեր>> ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Խաչատրյանի դիմումը քննարկելու մասին,

6. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ հատկացնելուն համաձայնություն տալու մասին,

7. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի 14-րդ փողոցի ոռոգման ջրագծի 300գծամետր հատվածի փոխարինման մասին,